«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/20

ք.Երևան «23» ապրիլի 2021թ.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Հովակիմյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Դիասերվ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սամվել Ծալքյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ` պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ` ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1Գնորդն իրավունք ունի`**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք`

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա`

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք` պայմանագրով նախատեսվածի փոխարեն` պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռքբերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, երբ խախտելն էական է համարվում,

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

[illegible] խախտվել են 2օրից ավելի,

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

**2.2.1** Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

**2.2.2** Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2.3** Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի **6.5** կետով նախատեսված տույժը:

**2.2.4** Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

**2.2.5** Պայմանագրի **2.3.3** կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

**2.3.1** Գնորդից պահանջել ընդունել պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

**2.3.2** Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

**2.3.3** Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

**2.3.3.1** Գնորդի կողմից պայմանագիրը խախտել նէական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

**2.3.4** Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

**2.4.1** Գնորդին հանձնել ապրանքը՝պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով:

**2.4.2** Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի **2.1.2** կետի բ) ենթակետին և (կամ) **2.1.5** կետին համապատասխան՝Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

**2.4.3** Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

**2.4.4** Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

**2.4.5** Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով,լրացնել թերի մատակարարվածը:

**2.4.6** Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի **2.2.2** կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն,ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

**2.4.7** Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի **6.2** և **6.3** կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

**2.4.8** Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

**2.4.9** Պայմանագրի **2.1.7** կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.4.10** Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

**3.1** Պայմանագրի գինը կազմում է **139.000.000 (մեկ հարյուր երեսունինը միլիոն)** ՀՀ դրամ:Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ...

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնել այն, իսկ Գնորդը նվազեցնել այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է համաձայն-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4.ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5.ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է չմատակարարված ապրանքի գնի 0,05 տոկոսի չափով տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին

տասնորդական)տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու,սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո,և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը,ջրհեղեղը,հրդեհը,պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը,պետական մարմինների ակտերը և այլն,որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իրմեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով,որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը [illegible] պայմանագրին կից հաջորդող

յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով սկզբնական մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ՝ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա-րելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից տուժանքի ձևով համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման N1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը

օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»
ԲԿ ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան,
Գյուրջյան 10
ՀՎՀՀ 00856548
ՀԷԲ Խորհրդային 1
Հ/Հ 163075481800
Տնօրեն՝ Ա.Հովակիմյան

---------------------
/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

«Դիասերվ» ՍՊԸ
ք.Երևան, Մոսկովյան 7-20
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022010311001
ՀՎՀՀ 00029275
Տնօրեն՝ Ս. Ճալքան

---------------------
(ստորագրություն)

Հավելված N1
2021թ. . . կնքված
. . ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը *** |
| 1. | 33151160 | Լիտոտրիպսիայի սարքավորում | MODULITH SLK "intelect" «Storz Medical AG» (Շվեյցարիա) | Տեխնիկական բնութագիրը ներկայացվում է կից | հատ | 139.000.000 | 139.000.000 | 1 | ք. Երևան, [illegible] 10 | 1 | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած առնվազն 20 օրացուցային օրվա ընթացքում |

## Ծոկ-ալիքային համակարգ լիթոտրիպսիա` ուլտրաձայնային հետազոտությամբ

| Բնութագրական | Պահանջվող հատկանիշներ |
|---|---|
| **Կլինիկական նշանակումը** | |
| Քարերի տարրալուծում միզուղիների և լեղուղիների բոլոր մասերում` հեռավոր լիտոտրիպսիայի մեթոդով, ուլտրաձայնային և ռենտգենյան ուղեցույցի հսկողության ներքո | Առկայություն |
| Ախտորոշման ընթացակարգերի և Էնդոուրոլոգիական վիրահատությունների համար աշխատավայր` կախված կլինիկայում համապատասխան | Առկայություն |
| Էնդոսկոպիկ ստանդարտի առկայությունից | Առկայություն |
| Ծոկային ալիքի մոդուլ<br>Ծոկային ալիքի ձևավորման էլեկտրամագնիսական սկզբունքը | Առկայություն |
| Առավելագույն կիզակետային հեռավորություն (հարվածային ալիքի աղբյուրի եզրից հեռավորությունը հարվածային ալիքների կենտրոնացման գոտու կենտրոնից), ոչ պակաս, մմ | 150 |
| Հարվածային ալիքի աղբյուրի զուգակցումը պարզ ջրով լցված բազմաստիճան միջերեսի բարձիկի միջոցով | Առկայություն |
| Հարվածային ալիքի աղբյուրի տրամագիծը, ոչ պակաս, մմ | 175 |
| Հարվածային ալիքի աղբյուրի բացման անկյունը, ոչ պակաս, աստիճաններ | 60 |
| Հարվածային ալիքների կենտրոնացման գոտու գծային չափերը, ոչ ավելի, մմ | 15 x 70 |
| Հարվածային ալիքների ազդեցության ուժգնությունը կարգավորելու քայլերի քանակը `ոչ պակաս | 15 |
| Ֆոկուսի E- ի առավելագույն արդյունավետ Էներգիան (12 մմ) `ոչ պակաս. մեգաջոուլ | 100 |
| Ֆոկուսի կենտրոնում Էներգիայի առավելագույն խտությունը, ոչ պակաս, մջ / մմ | 1,6 |
| Ֆոկուսի առավելագույն ճնշումը, ոչ պակաս, ՄՊ | 77 |
| Հարվածային ալիքների գործարկման առավելագույն կրկնության տեմպը, րոպեից ոչ պակաս ցնցող ալիքներ | 180 |
| Հիվանդի ԷՍԳ-ի հետ հարվածային ալիքների հրահրումը համաժամեցնելու ունակություն | Առկայություն |
| Հարվածային ալիքի աղբյուրի երաշխավորված ռեսուրս `դրանում ներառված բոլոր ծախսվող նյութերով` ոչ պակաս հարվածային ալիքներից | 1.000.000 |
| Հարվածային ալիքների մեկ աղբյուր տեղադրված է շարժական ամբոցի վրա `ռենտգենյան թիրախային գոտուց ցնցող ալիքների աղբյուրը ամբողջությամբ հեռացնելու ունակությամբ: | Առկայություն |
| Ծոկային ալիքի աղբյուրի շարժիչային շարժումը հիվանդի վերին և ստորին դիրքերում | Առկայություն |
| Հարվածային ալիքի աղբյուրը հիվանդի սեղանից և ռենտգենյան սարքից ամբողջությամբ շեղելու հնարավորություն` առանց սեղանից կամ ռենտգենից մեխանիկական անջատման անհրաժեշտության | Առկայություն |
| Անհրաժեշտ ճնշման մակարդակում միացնող բարձիկի ավտոմատ զուգավորում հիվանդի մարմնի հետ | Առկայություն |
| Առանց անզգայացման լիտոտրիպսիա կատարելու հնարավորությունը | Առկայություն |
| Հարվածային ալիքների քանակի ներկառուցված հաշվիչով. ցնցող ալիքների կրկնության արագությունը և ինտենսիվությունը կարգավորելու ունակությամբ. ցնցող ալիքների ներթափանցման խորությունը կարգավորելու ունակությամբ սենսորային էկրան | Առկայություն |
| **Ուլտրաձայնային մոդուլը հարվածային ալիքները դեպի հաշվիչ և ուլտրաձայնային ուսումնասիրություններ ուղղելու համար** | Առկայություն |
| Թվային ուլտրաձայնային ճառագայթների ձևավորման տեխնոլոգիա | Առկայություն |

| | |
|---|---|
| Ուլտրաձայնային մոդուլի կառավարման վահանակ՝ բարձրությունը դիրքը փոխելու հնարավորությամբ | Առկայություն |
| Ուլտրաձայնային ուղղորդման սենսորը խնտեգրված է ցնցման ալիքի աղբյուրի իր կենտրոնական առանցքի վրա | Առկայություն |
| Ուլտրաձայնային սենսորի կյանքի անկախությունը ցնցող ալիքներից | Առկայություն |
| Ուլտրաձայնային ուղղորդման սենսորի սկանավորման անկյունը, ոչ պակաս. աստիճաններ | 60 |
| Հարվածային ալիքի աղբյուրի ներսում ուլտրաձայնային ուղղվածության սենսորը պտտելը | Առկայություն |
| Ուլտրաձայնային ուղղորդման փոխարկիչի թարգմանական շարժումը հարվածային ալիքի աղբյուրի մեջ հիվանդից / դեպի հիվանդ | Առկայություն |
| Պորտերի քանակը ուլտրաձայնային համակարգին միաժամանակ միացված սենսորների միացման համար , ոչ պակաս քան | 2 |
| Ուլտրաձայնային համակարգից պատկերներ և տեսանյութեր փրկելու USB միակցիչ | Առկայություն |
| Ուլտրաձայնային համակարգի մոնիտորի էկրանին նշանի նպատակն է՝ հաշիվը հաշվարկելու համար | Առկայություն |
| Գունավոր մոնիտորի անկյունագիծ, ոչ պակաս, սմ | 40 |
| Սկան ռեժիմները՝ V, M, դոպլեր | Առկայություն |
| Կինոյի օղակը B - ռեժիմով, ոչ պակաս, կադրերում | 10 000 |
| Պատկերները պահում սարքի էներգակախվածության հիշողության մեջ, առնվազն լուսանկարներ | 100 000 |
| **Պացիենտի պարկեցնելու սեղան** | Առկայություն |
| Ունիվերսալ շարժական ֆլյուորոսկոպիա և ախտորոշիչ աղյուսակ | Առկայություն |
| Ռենտգենյան թափանցիկ սեղանի սեկցիաներ | Առկայություն |
| Մեկ հենակետային սյուն սեղանի գլխային մասում | Առկայություն |
| Օժանդակ ընթացակարգերի և էնդոուրոլոգիական միջամտությունների և ֆլյուորոսկոպիայի համակցված իրականացում | Առկայություն |
| Սեղանի տախտակի երկարությունը, ոչ պակաս, մմ | 2100 |
| Սեղանի տախտակի լայնությունը, ոչ ավելին, մմ | 760 |
| Սեղանի ստորին դիրքը, ոչ ավելին, մմ | 820 |
| Սեղանի բարձրացման կարողություն, ոչ պակաս, կգ | 180 |
| Սեղանի տախտակի բարձրության ճշգրտման միջակայքը, ոչ պակաս, մմ | 200 |
| Սեղանի տախտակի երկայնական շարժման տիրույթը, մմ | 200 |
| Սեղանի խաչմերուկի շարժման միջակայքը, ոչ պակաս, մմ | 100 |
| Սեղանի գագաթի երկայնական թեքումը դեպի Տրենդելենբուրգի դիրքը | Առկայություն |

| | |
|---|---|
| Սեղանի մոտ գտնվող սեղանի բոլոր շարժումների կառավարման վահանակ | Առկայություն |
| Ընդլայնման կողային սեղանի հատվածներ | Առկայություն |
| Ընդարձակման սեղանի գլխի հատված | Առկայություն |
| Հիվանդի ամրագրման գոտի | Առկայություն |
| Տարբեր ձևերի բարձերի հավաքածու | Առկայություն |
| Հիվանդի ոտքերի հանգիստը՝ 2 հատ | Առկայություն |
| Ուրոլոգիական արտահոսք | Առկայություն |
| Սեղանի շարժման կառավարման ռոնակ | Առկայություն |
| Ինֆուզիոն ստենդ | Առկայություն |
| Հիվանդի թևը բռնելու( հենելու) հարմարանք | Առկայություն |
| **Ընդհանուր պահանջներ** | |
| Սարքավորումների օգտագործողի ձեռնարկներ ռուսերեն լեզվով | Առկայություն |
| Սարքավորումների շահագործում | Առկայություն |
| Առնվազն երեք օր ժամկետով բժշկական անձնակազմի ցուցում աշխատավայրում | Առկայություն |
| Երաշխիքային պարտավորություններ, առնվազն ամիսներ շահագործման հանձնելու օրվանից | 12 |
| Երաշխիքային ծառայություն, գործարկման օրվանից առնվազն ամիսներ | 12 |
| Սարքավորումները պետք է լինեն նոր, արտադրված 2021 թվականից ոչ շուտ | Առկայություն |
| Հարվածային ալիքի աղբյուրը կամ փոտոդիպոլով մատակարարվող աղբյուրները ապահովում են առնվազն հարվածային ալիքների արտանետում | 4.000.000 |

**ԳՆՈՐԴ**

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան,
Գյուրջյան 10
ՀՎՀՀ 00856548
ՀԷԲ Խորհրդային 1
Հ/Հ 163075481800
Տնօրեն՝ Ա. Հակիմյան

---------------------
/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

«Դիասերվ» ՍՊԸ
ք.Երևան, Մոսկովյան 7-20
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022010311001
ՀՎՀՀ 00029275
Տնօրեն՝ Ս. Ճալքան

---------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N2
« » 2021թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [illegible] | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 33151160 | Լիտոտրիպսիայի սարքավորում | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում | | | | | | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան,
Գյուրջյան 10
ՀՎՀՀ 00856548
ՀԷԲ Խորհրդային ին 1
Հ/Հ 163075481800
Տնօրեն՝ Ա.Հովակիմյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Դիասերվ» ՍՊԸ
ք.Երևան, Մոսկովյան 7-20
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022010311001
ՀՎՀՀ 00029275
Տնօրեն՝ Ս. Ճալքյան

(ստորագրություն)
Կ.Տ